

նոց մերոց։ Այսպէս հողմն հիւսիսոյ գհիւսիսական թռչունն տեղայ ՚ի մեզ իբրև զմանանայ, և զեփիւռ քաղցրաշունչ զսոխակսն ընծայաբերէ . յորմէ կողմանէ աշխարհիս և չնչեսցեն հողմք, բարձեալ բերեն զպարգևս ինչ վերնախնամ տեսչութեան։

Առատարանորեան ոձ :

Դրութեան ոձոյ մէջ տեսակ մը առատութիւն կայ, որ եթէ ըստ պատշաճին գործածուելու ըլլայ, անոր աւելի գեղեցկութիւն և ձոխութիւն մը կուտայ . և այս առատութիւնը ուրիշ բան չէ՝ բայց եթէ ընտիր բառից և գեղեցիկ դարձուածոց յաճախութիւն մը, մտածութեան, զգացման և երեակայութեան այլ և այլ աստիճանները չշդիւ բացատրելու համար։

Լայ նաև տեսակ մը սնոտի առատաւանութիւն, որով մէկը բառերը խիտ առ խիտ բարդելով, կը ջանայ անով ծածկել իր հանճարոյն անբեղնու-

թիւնն և մտածութեանցը չքաւորութիւնը։

(Ո)է որ մէկը ուզէ դիմացինը զգացը նել, կամ անոր հաճոյ ըլլալ և կամ պարզապէս զինքը կրթել, ոճոյ առատութիւնը միշտ զգացմանց և մտածութեանց մէջ պէտք է բանեցընէ, ան ալթէ որ այնպիսի նիւթ մը ըլլայ որ զայն վերցընէ, և կարենայ ուզածին պէս ընդարձակուիլ . այն ատեն մտածութեան հետ բացատրութիւնն ալ հաւասարապէս առատաբար կը ծաւալին։

Փուժ տեղը և շատ անգամ առանց վախճանին ալ հասնելու կ'աշխատի մէկը, եթէ դիմացը խեղճ կամ երկրորդական մանր նիւթ մը առած ուզենայ զայն զարդարելով ձոխացնել կամ ընդարձակել։

Կաթէն, զոր ոմանք քերդողական ընտիր ձաշակի օրինակ սեպեցին, այն մարդը՝ որ բանաստեղծական գեղեցկութեան և վայելութեան և ոչ գաղափարն անգամ ունէր, քառասուն տող կը շարէ միայն ՚ո՞նէս ՚որէլի գեղեցկութիւնն ու զարդարանքը նկարագրելու համար, այս ոճով։

Յերկոսին ծայրս երկուցն ամփոփ թեզանեաց
կամ հոլանեալ զոյգ ձեռք երկայնք՝ ձիւնազգեաց .
Ո՞ատունքն անհարթ, այլ վայելուչք բոլորչի,
Չիգ ըստ ծրղեացն առոյգագեղք նըրբենի։

Ի՞անաստեղծութեան մէջ սիրտ շարժելու արուեստն է՝ հանճարով զուրիշը զգացընել . այն ատեն առատութիւնը պնակէս պէտք է բանեցընել որ քիչով շտ բան հասկրցուի . որ է ըսել՝ պէտք է թեթե և կտրուկ իմաստներ դնելով

դիմացինին երևակայութեանը թողուլու մնացածն ինքը մնաքին մէջ խորհըգածէ։

Տես թէ ինչպէս ՚իրգիլիս չորս տողով զլուտղիկ իբրև որսորդ կը ստորագրէ։

Օի կըէր կախեալ զուսոյ աղեղն յաջողակ,
՚իրպէս որսորդ, թողեալ հողմոյ զհերան արձակ .
՚յւ մերկ ի ծունկը խորշաքաղ ի հանգոյց
՚զլայն քըղանցաըն հանգրիճեալ ըզգեստուց։

Ի՞այց թէ որ այն տեսակ քերդութիւն մը ըլլայ, որուն մէջ հարկաւ մունը նկարագրութիւնք կը յաշխիւն, ամէն բան կերպով մը մօ-

տանց դիմացինին ազքին առջելու դնելու համար, և որուն գլխաւոր յարգը պարզացից յաճախութեանը մէջն է, ինչպէս ՚իլիդիոսի ՚յլակերպութեանց, և

ՐԵԳՐԱՐԳԱՅԻՆՈՒԱԳՆԵՐՈՒՆ ՄԵջ ԿՐԹԵԱ-
ՆՈՒԻ, ԱՅՆ ԱՏԵՆ ՈՃՈյ ԱՌԱՄՈՒԹԻՒՐ պատ-
շաճ ԿԵՐԱՊՈՎ ԿՐՆԱՅ ԲԱՆԵցուիլ

ԴՐԱ ԱՐԴԱԿ ՆԱԽ ԿՐՆԱՅ ԸԼՈՎԻԼ ԳԻՒԳԱՋ-
ՆԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԱԼ, ԵՐԲ ՆԻՒԹՈՅՆ և
ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹԵ ԱՆՎԱՄՈՉԱՃՈՒ-
ԹԻՆ ՀԱՅԵՐԵՐ ԳԵՎՔ ՄԸ ԿԱՄ ԻՐ ՄԸ ՄԱՆ-
ՐԱՄԱՆ ՆԿԱՐԱԳՐԵԼԸ. ԻՆչպէս ՌԵՐԻՈ-
ԴՈՅ ԻՐ ՔԵՐԴՈՒԱՃԻՆ ՄԵՋ ՌԵԿԻՆԵԱՅ ԳԵ-
ՂՋՆ ՎՐԱՅ ԱՆԱՆԿ ՍՄՈՐԱԳՐՈՒԹԻՆ ՄԸ
Կ'ԸՆԵ, ՕՐ ԴՐԱՍՍՈՅ և ՈՒ ԻՐԳԻԼՈՍ ՀԵՆ
ՀԱՄԱՐՃԱԿԱԾ, ԿԱՄ ԹԷ ԱՐԺԱՆԻ ՄԵ-

ԱՊԱԾ ՀԵՆ ԻՐԵՆԸ ՌԵՐՄԻԳԱՅԻՆ և ԴԻՎԵՔԻՆ
ՎՐԱՅ ԱՅՆ ԱՍՏԻՇԱՆԻ ՃՈՒԱՆԱՊԼ. ՌԵՄ
ՅԱՅՄՆԻ է ՕՐ ԱՅՆ ԿՄՈՒՐԸ ԻՐ ՄԵՍԱԿԻՆ
ՄԵՋ ՓԱՓՈՒԿ և ԳՈՂՄՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԵ
ԱՔԱՆՑԵԼԻ ՕՐԻՆԱԿ ՄԸՆ է, ՕՐ ԵՐԿԱՅՆ ՔԵՐ-
ԴՈՒԱՃԻ ՄԸ ՄԵՋ յԱՐմար դըքին գալով,
ԻՄԱՍՏԻԾ և բացատրութեանց շուայլու-
ԹԵԱՆԸ ՀԱՄԱՐ պախարակելի չէ:

ՀԱՅԼԻՆ ԼՐԱՐՈՐԴ ԴՐՈՒԱԳԻՆ ՄԵՋ ԱԼ
ՀԱՅԼԻՆՈՒԾԱՅ ՔՆԱՐ ՎԱՐՆԵԼՈՒՆ ՍՄՈՐԱ-
ԳՐՈՒԹԻՆԸ ԱՌԱՄՈՒԹԵԱՆ ՈՃՈՅ ԳԵ-
ՂՋԻՒԿ ՕՐԻՆԱԿ ՄԸ ԿՐՆԱՅ ՄԵՎՈՒԻԼ:

Ի՞նդ ՀԱՅԼԻՆՈՅ ՋԵՄ ԸՆԹՐԵԱՋՆ ԱռԵԱԼ ԸՊՔՆԱՐ ԻՎՐ ՓՂՈՍԿՐԵԿԱՅ,
Եւ անցեալ՝ ի դարեւանդ մի դալարի բըլրոյն՝ ի նիստ,
Ուաղաւարտ ուկեծամուկ լուսափետուր զսամոյր հերսովք,
Ուեծագեղ աչկունքն ՚ի բոց ջահիցն արփիք շողշողենիք,
Հեղաշարժ աղաւնակերպք ՚ի վեր յերկինս ուղերձեալ բիրք.
Դաղագանգուր վարսից խոպովք յերկնանըման փաղփեալ ճակատ,
Ռ. յարք յասմիկ փունջ խուռն ի վարդ, ըըրթունք նըրբինք եւ կարմրալար,
Կաթնորակ ուն ՚ի ծամից հիւսրս կուածոյ սքողեալ ցըլանջս,
Ռազուկք ցարմուկ և ցըտիգս ճախարակեալ շուշանափայլք,
Ուատունք գեղաշիտակք լարս ի քնարին ու ի կըալնդոց.
Զորձք անփութ պընդով ընդ մեջ ի թեզանիս թոյլ և արձակ,
Եթր ի կէս զինուորական ձեւ մինչ ի ծունկս փողփողենէջ,
Հազիւ զառոյդ բոլորի փափուկ թամբիւք ծալ ծալ ի հով.
Օ ծիւնաթոյը գիրգ և մանու թաթիւք ոտիցըն մոյկք կարմիր
Ուկեհիւս ժապաւինեալք, որպէս յարծաթ օսկի պաճոյք,
Եւ գարնային դեռ աղուաբոյք շուք լուսաներկ փըթթեալ բարձից.
Եւազելի կերպարանօք զաշս հանդիսին յինքըն գըլեալ,
Ռըման վարդին յետ մըրըրկի ցօղատարափ ժըմնեալ զըւարձ,
Կամ նըշուլիցն արփենից կաթեալ ի բլուրս յետ ամսլուպաց,
Պատանի արիասիրտ ի գեղաւորն երեւեալ կոյս,
Պատանեակ ի սկայս արանց, ըսկայ ի պարս օրիորդաց,
Պատկեր սուրբ. ըընաշխարհիկ՝ զուարթնոց երկնից եկեալ ի սէր.
Ռ. ստ և անդ, մօտ եւ հեռի, ազատագունդն ակնարկելով,
Եւ ամբոխն յոտն ՚ի մատըն յարուցեալ յակձիռս յայթիռս,
Ըք և սիրտ ամենեցուն յարի պարկեշտն ընկըղմեալ գեղ,
Ու ուրուք բերեալ նախանձ ի գեղապանձ հասակացաց.
Հրեշտակ կոյս գեղեցկութիւն ամբիծ ի սուրբ սիրտ և յանձին,
Երեւեալ հայաստանեայց զըւարթ Հրեշտակն երկնածազիկ,
ԴՐԱ ԱՍՏԵՂԵԱՅ կապոյտ խորանն աղու բըրգքն յափըշտակեալ,
Եւ մըտօքն ի գեղ ի սէր աստուածաբուն անբաւութեան —
Ուանաւանդ թէ ի հոգւոյն նա նըկարեալ ջինջ հայելի —
Ու ՚նդ վեհ հօրն ահեղ բանակ յեռանդնաշարժ ի հիացումն
Յերկնից ապրատամբին՝ դդէմ գուողին կաձառելց .
Ըագեղ և դիւցային դուատրըն Հայոց բազմեալ այսպէս,
Ըւագել քաղցըր ձայնիւ կըտընդոցին ընդ աղերախս :

ինչպէս կը տեսնենք, ամբողջ այս
մանրամասն նկարագրութեն մէջ, գըր-
շն փափկութիւնը և ձարտարութիւնը
մեծ կատարելութեան հասած է:

Ի՞սատութիւնը հանձարեզ կերպով
կրնայ գործածուիլու միայն նկարագրաւ
կան քերդուածոց մէջ, այլ նաև հո-
գոյն զեղմննէն առաջ եկած զգացմանց
բացատրութեանը, և իր անդորրու-
թեանը ժամանակ ըրած խորհրդածու-

թեանցը մէջ: Ա իրգիլիոս, և իր նա-
խանձորդը Արասին, այս բանիս բիւր օ-
րինակ կու տան:

Դեղեցիկ առատութիւն մըն է և այն
որ իրեն դիմամարտ համառօտութեան
հետ միացեալ, ամենափոքր կտորի մէջ
կը պարփակէ Ճոխ նկարի մը ամենայն
մասունքը. ինչպէս են Արատեայ այս
տողերը, զորոնք շատ դժուարին է ճը-
դիւ թարգմանել.

Աւ բարձրաձաղկըն թեղօշ եւ ըսպիտակ կաղամախին
Օ ասպընջականն հովանի սիրեն ոստովք զուգախառնել.
Աւ ճըգնեալ յընթաց վըտակ խուսափուկ
Ի՞նդ մանուածաւալ պըտոյտ գըդըչայ:

Առ տեսակ վայելուչ և ախորժական
առատութիւն մըն է և այն դիւրախա-
ղաց և անարուեստ կերպը անոր գրչին
տակ, որ ընդարձակ հանձարոյն հետ
ունի նաև ոճոյ Ճոխութիւն: Ի յս սա-
կաւագիւտ բարեմասնութիւր, թէ նե-
րելի է այսպէս բացատրել, Ի աֆոնդէ-
նի ու Ավիդիոսի ոճոյն մէջ աւելի կ'ե-
րեի: Ի այց Ա աֆոնդէնի առատութիւ-
նը բնական, ինքնազարդ, անարուեստ
և յարափոփոխ Ճոխութիւն մըն է.
և այնչափ աւելի զարմանալի է այս ա-
ռատութիւնը այնպիսի նիւթերու մէջ
որ կարծես թէ ցամաք բաներ են,
առանց արուեստակութեան կամ բըռ-
նի իմաստներ դնել ջանալու: Իսկ Ա-
վիդիոսի բանեցուցած առատութիւնը՝
թէպէտ Ճոխ և ինքնածին, սակայն եր-
բեմն արուեստի և ինչուան չափազան-
ցութեան կ'երթայ: Իր իմաստ մը բա-
ցատրելու համար գործածած այլ և այլ
դարձուածքներուն, և զգածման մը
մէջ խառնած զանազան նկարագրու-
թիւններուն բոլորն ալ ախորժելի կ'ըլ-
լային թէ որ զատ զատ ըլլային, բայց

շատը մէկտեղ գալով ձանձրութիւն կը
պատճառեն, և Ճոխութեան հետ մէկ-
տեղ ցամաքութիւն մը կ'երեցնեն:

Դերմանական բանաստեղծութիւնը
բնական նկարագրութեանց մէջ ման-
ուամասն պարագաներու կ'իջնէ. իսկ
Խոտալականը, զգացման բացատրութեն
մէջ Ճոխանալով, նոյնպէս չափազան-
ցութեան կ'երթայ:

Ոճոյ առատութիւնը գլխաւորապէս
կրից զգածմունքէ առաջ կուգայ, երբ
հոգին հառաջանօք և հեծութեամք
կը սփոփի և միաթարութի մը կը զգայ.
և մէկը ինչուան որ ներքուստ կրած
տագնապը արտաքուստ չյայտնէ խօս-
քով՝ չհանդարտիր:

Իսկ երբ սիրտ մը ցաւով վըտա-
գնեալ, կամ ամբարտաւանութեամբ և
կամ բարկութեամբ լեցուած է, այն
ատեն իր բացատրութեանցը մէջ բնա-
կան համառօտութիւն և սաստկութիւն
մը կ'երեի. բայց կ'ըլլայ նաև երբեմն
որ սաստկութեան հետ առատութիւնն
ալ կը միանայ. ինչպէս Դիդէի այս տո-
ղերուն մէջ.

Ի՞լ ինձ իցիւ բացցի երկիր ի խորոց
Եւ ի ստուերաց ամենակալ հայրն ի ծոց
Տըժգոյն ի ստուերս անդ Արեթեայ արկցէ զիս
Իմբահարեալ յաստուածասաս ի շանթիս,
Եւ 'ի գիշեր անկայց ի խոր գահավէժ,
Ի՞ան թէ զըրժել քեզ սրբութիւնը պարկեշտ,
Եւ զօրինօքդ ըստահակեալ անցանել:

Ավ տեսնենք հոս կին մը որ զգալով
իր տկարութիւնը, կը ջանայ նոր երդ-
մամբ մը ինքզինքը ամրապնդել, զոր

անդրժելի և զարհուրելի կերպով մը
կը հաստատէ . ուստի այս ոճոյ բար-
դութիւնը,

Տըժգյն ի ստուերս անդ Արեբեայ արկցէ զիս —
Եւ ի գիշեր անկայց ի խոր գահավէժ,

իր երդմանէն պակսելուն վրայ ունե-
ցած վախին ամենաբնական բացատ-
րութիւնն է :

Այսպէս կը խօսի նաև երբ մէկը
սաստիկ կրիւք զգածեալ կը սկսի զայն
արտաքուստ արտայսյտել . ինչպէս են
Դիդէի և Լամիլեայ ըրած անիծանք-
ներն, և Խիթականի իններորդ զրբին
մէջ Աքիլէսի իր անողոքելի սրտմտու-
թիւնը յայտնելու համար ըսած խօս-
քերը :

Արք խօսողին բնաւորութիւնն է
խիստ և ծանր, իր բացատրութիւն-
ներն ալ պէտք է ըլլան ձոխ, ազդու և
համառօտ : Փ. Գարդէս, Ո՞եքսի-
կոյէն գառնալէն ետև, Փիլիպպոս Բէն
պաշտօնեաներէն անարգուած, և չի-
կըրնալով քովը մօտենալ, անցնելու
միջոց դիմացը կ'ելլէ ու կ'ըսէ . “ Իմ
անունս է Փ. Գարդէս . քու հօրմէդ
Կարողոս հինգերորդ կայարէն ժառան-
գածէդ աւելի քեզի երկիր ստանալ
տուի . և հիմա անօթութենէ կը մեռ-
նիմ . . . : Հաւասիկ ձարտասանու-
թիւն : Ո՞երվիլ, Յ արդրի եպիսկոպո-
սը, ցորենի սաստիկ՝ կարօտութեն ժա-
մանակ, իր թեմին աղքատներուն հա-
մար թագաւորէն դրամի գումար մը
խնդրելով կ'ըսէ . ” Տէր արքայ, դու
առատութեք ապրելով չես իմանար առ-
վի նեղութիւնը . բայց սովէն առաջ
կու զայ ժանտախտը, և ժանտախտը
բոլոր աշխարհի վնասակար է . . . : Ո՞յս
ալ նաև ձարտասանական համառօտ
խօսք մըն է :

Փարսալիա քերդուածին մէջ Լատո-
նի և Շրուտոսի խօսակցութիւնը խիստ
գերազանց կ'ըլլար թէ որ երկայն ըլլ-
լար : Լուկանոս այդ երկասիրութիւնը
զրած ժամանակ դեռ երիտասարդ էր,
և երիտասարդի մը փառասիրութիւնն

է ինքն իր վրայ Ճոխանալովը զուրիշը
զարմացնել : Ո՞րուեստի կատարելու-
թիւն է կենալ հոն ուր բնութիւնը
կանկ կ'առնու : Ո իրգիլոս և Ո՞ասին
այդ չափաւորութեան օրինակ են : Խսկ
Հոմերոս և Դառնէյլոյն կատարելու-
թիւնը չունին :

Ո՞ր և իցէ իմաստասիրական գրուածք
որուն մէջ կրնայ Ճարտասանութիւն
բանեցուիլ, հոն կրնայ նաև չափաւոր
ոճոյ առատութիւն մտնել : Ո՞յս ոճով
Պլուտարքոս՝ աւելորդապաշտ մարդուն
տագնապն ու անձկութիւնը կը ստորա-
գրէ . և բնական պատմութեան մա-
տենագիրը՝ սիրամարգին գեղեցկու-
թիւնն ու վագրին վայրագութիւնը
նկարագրելու համար լեզուին բովան-
դակ հարատութիւնը գործածած է :

Շայց ընդհանրապէս իմաստասիրա-
կան ոճը կը պահանջէ Ճոխութիւն ի-
մաստից, յստակութիւն և համառօ-
տութիւն : Ի իգուրկոս կ'ուզէր որ տը-
զաք երկայն ատեն լուութիւն պահե-
լով, կենդանի և ազդու կերպով խօ-
սելու վարժին : Ո ասն զի, կ'աւելցընէ
Պլուտարքոս, ինչպէս մարդիկ զեղսու-
թեամբ անպտուղ և անարգասաւոր
կ'ըլլան, ասանկ ալ լեզուի շուայլու-
թեամբ խօսքն անզօր և անպիտան կ'ըլ-
լայ : Ա ակեդեմոնացւոց ձարտասանա-
կան ձևերն էին պարզ և ծանրակշիռ
խօսքեր, կծանող ազդուութիւն մը, որ
նետի մը պէս թռչելով՝ դէպ ուղիղ՝ ի
նպատակն կը դիմէր :

Ո՞տածութեանց և ոճոյ հարստու-
թիւնը աւելի ատենաբանական մասին
մէջ կրնայ առատապէս գործածուիլ :
Հին ձարտասաններն կ'ուզէին որ իրենց
համբակներն խսկ այս կտորիս մէջ աւե-
լի քան զչափն Ճոխանան : Ո՞արկոս Ո՞յ-
տանիոս իր Ո՞ուլպիկիոս աշակերտին հա-

մար այսպէս կ'ըսէր . “ | ուեալ իմ զառաջինն զատենախօսել պատանեկին ’ի դատ ուրեք դուզնաքեայ , ոչ անհաճոյ ինձ երեւցան երագաքայլ ընթացք ձառիյն և սաստկութիւն , որ իւրումն հանձարոյ արգասիք էին , և եռանդն բառիցն և առաւելազանց ձոխութիւն , ըստ թելադրել տիոց հասակին : Վան զի կամիմ անդստին ’ի պատանեկութեն առատութեան հանձարոյն երեւել ’ի նմա : Օ ի որպէս յորթս այգեաց՝ որ քան զշափն շռայլեալ սաղարթք դիւրագոյնս յասլաւին , քան յետ եղծանելոյ արմատոյն՝ նորաբողբոջ բարունակք ’ի նմա արձակիցին . սապէս կամիմ զի ’ի պատանութեանն իցեն ինչ ինչ ’ի բաց թօթափելի . որովհետև չէ իսկ հնար հիւթոյ գոլ տեական յամենայնի , որ յանժամ ժամանակի երագ հասունացեալ է . . . : Իսայց կ'ուզէր նաև որ նոյն համբակը տարագէպ առատաբանութենէ զգուշանայ և զինքն ուզդելու ջանայ , մշակին նմանելով որ դալարազգեստ ցորենը ձարակել կու տայ . “ | տարապայման ձոխութեն է ինչ շռայլութիւն՝ զոր ոճով յղկելի է . . . :

Ի՞սոր հակառակ ոճոյ թերութիւնն է ցամաքութիւն և անքեղնութիւն . զոր դիւրաւ կրնանք իմանալ , երբ մատենագիր մը այնպիսի նիւթի մը մէջ՝ որուն պէտք է խորունկը մմնալ և ընդարձակել զայն , ջանտալեայ պէս , թեթէ կարելի է այսպէս ըսել , սրընթաց գետի մը մէջ շնչառառ՝ բացատրութեան կամ մանաւանդ իմաստին ետեւէն ինկած կ'երթայ , որ կարծես թէ այն միջնոցին որ հասած կը համարի , ան աւելի կը հեռանայ :

Իսայց տաղտկալի ևս թերութի մըն է այս դարերուս ատեաններուն մէջ սպըրդած ընդունայն շատախօսութիւնը , որ նմանիր ամենեին լնտոնիոսի իր համբակներէն պահանջած առատաբանութեանը , զոր ինքն հարստութիւն կը համարէր . այլ տեսակ մը ծայրայեղ քաւորութիւն մըն է , և սովորական բարձուածքներու աւելորդ յաճախութիւն մը , որ աղքատ հանձարի նշան են

միայն : Ա՞նչպէս կարելի է ձշմարտութիւնը ջատագովական ձառերու խառնաշփոթ անդաւնդի մէջ խառնել շփոթել : Շատ անգամ դատաւորք փաստաբաններուն իրաւապէս կրնան զուրցել ինչ որ ատեն մը | ակեդեմնացիք երկայնաբան ատենախօսի մը կ'ըսէին . “ | լունախօսութեանդ սկիզբը մոռցանք . այն պատճառաւ մէջտեղն ալլաւ մը ըսմբոնելով , չենք կրնար մինակ վերջաբանութենդ պատասխան տալ . . . :

Լուս առաւել բեմբասացութեն մէջ պէտք է զգուշանալ երկայնաբան ըլլալէն , մանաւանդ պարզ և ցամաք նիւթի մը մէջ , բաժանումն բաժանմունքի վրայ աւելցնելով , յայտնի բանի վրայ երկայն բարակ շատաբանելով , որով ունկնդրաց ականջը կը յոգնի ու կը ձանձրանան :

Իսայց թէ որ նիւթն ըլլայ կրօնական և բարոյական մեծամեծ ձշմարտութեանց վրայ զոր ձառախօսը բեմէն պիտի քարոզէ , կրնայ երբեմն զայն ընդարձակել , և այն ատեն պէտք է ոճոյ առատութիւն բանեցնել , բայց առանց կիրթ ախորժակի և ուղիղ դատման պահանջած չափաւորութենէն դուրս ելլելու : Հանձարոյ նշան է՝ ժամանակն ու խօսքը ըստ չափուն գործածել , մանաւանդ բազմաթիւ ունկնդրաց համագումար ժողովի մը առջեւ :

Ո՞տիկ ըրէ ինչպէս Ո՞ասիլեսն կրօնական ներողամութեան վրայ կը խօսի . “ | Ճկեղեցին ընդգէմ հալածանաց համբերութք և եթ վարեցաւ . սուսեր նորա հաւատք միայն եղեն , որով յաղթեաց նա բռնաւորաց : Ոչ յարիւն յապաժոյժ զաշակերտն բազմացոյց , այլ վկայիցն և եթ արիւն եղեւ սերմն հաւատացելոց : Ի՞րաջին վարդապետք նորա առաքեցան ընդ տիեզերս ոչ հանգոյն առիւծուց , ածել ընդ հանուր կոտորած և սպանութիւն , այլ իբրև ըզդաւինս , մատնել զանձինս ’ի մահ . և ցուցին զառաքելութեն իւրեանց զջըշմարտութիւն , ոչ ’ի մարտակոիւ պատերազմեալ , այլ զմահ յանձն առեալ վասն հաւատոց . . . :

Դարձեալ նորապսակ թագաւորի մը բարեգործութեան վրայ ասանկ կը քարոզէ . “ Այ զքե կան համօրէն այդ սնոտի ցոյցք պերծանաց , են նոքա վասն այլոց . իսկ սէր բարեգործութեան քեզ միայնոյ է սէփական : Հայլն ամենայն է ինչ դառնութիւն , որ սովաւ ևեթ քաղցրանան բովանդակ : Հոյժ իմն առաւել քաղցր և գորովական է բերկրութիւն բարերարին քան զբարերարելցն : Դարձիր անդրէն ’ի նոյն , և ևս յաւելցի քեզ ախորժն բերկրանաց . և որչափ զայնու գայցես՝ այնշափ առաւել ըղձանաս ՚ի նոյն : Ինտելացեալն բարեբաստիկ կենօք՝ զզգայ զայն ամեննեին . այլ որոց պատճառքն եղեն այլոց բարեբաստութեան , ուրախ է սիրտ նորա հանապազօր , :

Հոս , ինչպէս կը տեսնես , բոլոր իսօնքերն նոյն իմաստի վրայ կը դառնան , և կարծես թէ բացատրութեանց մէջ ալ միակերպ նոյն դարձուածքն է . բայց անանկ մը շարած է որ իւրաքանչիւրն ալ երթալով իմաստը կը սաստկացնեն և ազգու կը ձգեն , և դիմացինին սիրտը կը շարժեն , ինչպէս ջուրը կաթիլ կաթիլ ժայռին վրայ ինչնելով վերջապէս կը կակլացնէ զայն :

Կիկերոնի գրոց մէջ այսպիսի առատաբանութեան բիւր օրինակներ կը գտնուին . Ինքը կը պատուիրէր գործածել զայն , ունկնդրին միտքը նոյն իմաստին վրայ երկայն ատեն սեեռեալ բոնելու համար . և այս սորուեցուցած արուեստին կատարելագոյն օրինակն ինքն է : Ո՞էկ կտոր մը հոս դնենք , Ո՞արկելեայ համար գրած ատենաբանութիւն որուն կեսար չնորհք ըրեր էր : “ Դակասու պատերազմաց , արիութիւն զօրականին , քաջադէպ յարմարութիւն վայրաց , թիկունք դաշնաւորաց , նաւաց տորմիլ և պաշար բանակին մէծապէս նպաստամատոյցք լինին . և բախտն՝ իբր ըստ արժան իրաւանց , զմեծ մասն ելից մարտին ինքեան սեփականէ , գոզցես զբովանդակ յաջողումն արարուածոցն յինքն տարեալ : Ո՞յլ ժառանգելումն առ ՚ի քէն փառաց՝ գթով և քաղցրու-

թեամբ , ով կեսար , չեղե ոք նպաստաւոր . քեզ վերընծայի բնաւին , որ ինչէն , զի են իսկ արդարե գերապանծ . և ’ի դրուատիս այդմ գովեստից չունին ինչ մասն ոչ ոք ’ի հարիւրապետաց և ’ի կուսակալաց , ոչ զօրաց գումարտակ և ոչ ամբոխ բազմութեան : ‘ Այն ինքն բախտ , տնօրէնն իրաց մահկանացուաց , ոչ մտանէ ’ի հանդէս՝ փառաց պատուոյդ գոլ հաղորդակից , այլ ընծայէ քեզ զայն , ըստ մասին և ըստ ամենայնին քոյդ լինել խոստովանեալ , :

Կը շարունակուի :

Մատրիտ :

Կւրոպայի մայրաքաղաքաց մէջ ընդհանրապէս շատը հինաւուրց սկիզբ մը ունին , իսկ Ո՞ատրիտ ընդհակառակն վերջի ատեններուս հիմնարկութիւն մըն է , ու Ո՞պանիոյ մէկալ քաղքըներէն աւելի նոր՝ թէպէտ և այսօրուան օրս անոնց մայրաքաղաքն է : Հուովմայեցւոց ժամանակ անծանօթէ էր աս քաղաքս , և Ո՞ իսիգոթաց իշխանութեան տակ հազիւ թէ գձուձ գեղ մը կրնար սեպուիլ : Ի՞ս նոր տերերուն գալէն դար մը և աւելի ևս վերջը , դեռ Ո՞ատրիտ իր անծան պայմանէն դուրս չէր ելած , երբ Ո՞րաբացիք մտածեցին որ Ո՞անսհանարէսի եզերացը վրայ եղած բլուրներուն քովը շատ աւելի յարմար էր մեծ քաղաք մը շնուել , քան թէ Դասդիլոյ ընդարձակ դաշտավայրին մէջ : Ի՞սով Ո՞ատրիտ շատ մեծցաւու ամրացաւ նոյն ժամանակը , ու հոն զինուորական զօրաւոր տեղ մը համարուեցաւ : Այն միջոցներուն երկար ատեն Ո՞ իսիգոթներէ առաջ եկած քրիստոնեալք և Ո՞րաբացիք սաստկապէս կռուեցան իրարու հետ զանիկայ ձեռք ձգելու համար . և վերջապէս Վրիստոնեալք տիրեցին անոր ժ . դարուն մէջ . բայց ացքերնին շկտրելով որ կարենան պահել , կործանեցին քաղաքը ու ամէն քան աւերելով ելան